ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԱՆ ԱԱԻ-ԳՀԾՁԲ-19/7»

ք. Երևան «04» հոկտեմբեր 2019թ.

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն, ի դեմս Ա.Բազարչյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Լալայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենայի վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 2000000 (Երկու միլիոն դրամ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև

ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ <<Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ>>ՓԲԸ	**Ֆլեշ Մոտորս ՍՊԸ**
Հասցե՝ք. Երևան, Կոմիտաս 49/4	**Հասցե՝ք. Երևան, Ռուբինյանց փ 31**
ՀՎՀՀ՝ 00011624	**«Արարատբանկ» ԲԲԸ**
Բանկ՝<<Հայէկոնոմբանկ>>Արաբկիր մ/ճ	**ՀՎՀՀ 00873228**
h/h՝ 163058101441	**Բանկ՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ**
	Հ/Հ 1510012745550100
Տնօրեն Ա.Բազարչյան	**Տնօրեն Ա.Հալայան**
/ստորագրություն/	**(ստորագրություն)**
Կ.Տ	**Կ.Տ.**

Հավելված 1
ՀՀ ԱՆ ԱԱԻ-ԳՀՇՁԲ-19/7 պայմանագրի
կնքված հուլիս 2019թ.

Տեխնիկական բնութագիր և գնման ժամանակացույց*

ՀՀ դրամ

Հ/հ	SU-1,SU-2 Ծառայությունների անվանումները***	Ավտոտեխսպասարկում Երևան քաղաքում****				Մատուցման ժամկետը
		Չափաբաժին 1 Ավտոտեխսպասարկում (Երևան)**	Չափաբաժին 2 Ավտոտեխսպասարկում (Երևան)**	Չափաբաժին 3 Ավտոտեխսպասարկում (Երևան)**	Չափաբաժին 4 Ավտոտեխսպասարկում (Երևան)**	
		Ռենո Դասթեր մակնիշի 515 NN 55	Ռենո Դասթեր մակնիշի 433AL 61	Շևրոլե Նիվա 479 UL 61	**Լանդ Քրուիզեր 001UL05**	
1	2	4	5	6	7	8
	*SU-1 ներառվող ծառայությունների անվանում*****					Պայանագրի կնքման պահից_մինչև 30 դեկտեմբերի 2019թ.
1	Բռնկման համակարգի ստուգում	0	0	0	0	
2	Սառեցման համակարգի ստուգում	0	0	0	0	
3	Յուղման համակարգի ստուգում	0	0	0	0	
4	Արտացման համակարգի ստուգում	0	0	0	0	
5	Կցորդման համակարգի ստուգում	0	0	0	0	
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	0	0	0	0	
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	0	0	0	0	
8	Կարդանային փոխանցման աշխատանքի	0	0	0	0	
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	0	0	0	0	
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի	0	0	0	0	
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի	0	0	0	0	
12	Արգելակային համակարգի աշխատանքի	0	0	0	0	
13	ABS համակարգի ստուգում	0	0	0	0	
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0	0	
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0	0	
16	Թափքի վիճակի ստուգում	0	0	0	0	
17	Տարբեր ազրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	0	0	0	0	
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումը***					
18	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները, բացի բլոկի փոխարինումից	600,000	600,000	400,000	800,000	
19	Շարժիչի բլոկի փոխարինում	0	0	0	0	
20	Շարժիչի բարձիկի փոխարինում	40,000	40,000	20,000	60,000	
21	Շարժիչի գլխիկի միջադիրի փոխարինում	20,000	20,000	10,000	20,000	
22	Շարժիչի գլխիկի վերանորոգում	20,000	20,000	10,000	20,000	
23	Փականի խցուկի փոխարինում	5,000	5,000	3,000	5,000	
24	Բաշխիչ լիսեռի փոխարինում	1,000	1,000	1,000	1,000	
25	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	12,000	12,000	12,000	12,000	
26	Բաշխիչ լիսեռի տվիչի փոխարինում	13,000	13,000	10,000	15,000	
27	Ատամնավոր փոկի փոխարինում	40,000	40,000	0	60,000	
28	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	
29	Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1	5,000	5,000	5,000	5,000	
30	Ծնկաձև լիսեռի հոկում	5,000	5,000	5,000	5,000	
31	Ծնկաձև լիսեռի տվիչի փոխարինում	500	500	500	500	
32	Նույնը կոնդիցիոների դեպքում				0	
33	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	
34	Նույնը ԱՓՏ-ի դեպքում				0	
35	Մխոցային օղակների փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	
36	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	10,000	10,000	5,000	12,000	
37	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	5,000	5,000	3,000	8,000	

1	2	4	5	6	7	8
38	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	5,000	5,000	5,000	5,000	
39	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի	8,000	8,000	8,000	8,000	
40	Շարժիչի քարտերի մաքրում	1,000	1,000	1,000	1,000	
41	Փականիվի փոխարինում	10,000	10,000	5,000	10,000	
42	Շարժիչի շղթայի փոխարինում				0	
43	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	22,000	22,000	22,000	22,000	
44	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	1,000	1,000	1,000	1,000	
45	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	20,000	20,000	20,000	20,000	
46	Հերմետիկի օգտագործում, 70 մլ	6,000	6,000	6,000	6,000	
47	Վառոցքի մոմերի փոխարինում	6,000	6,000	6,000	6,000	
48	Վառոցքի մոմերի լարերի խուրցի փոխարինում	30,000	30,000	30,000	30,000	
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ***					
49	Յուղի փոխարինում (սինթետիկ) 1 լիտր	5,000	5,000	5,000	5,000	
50	Յուղի փոխարինում (կիսասինթետիկ) 1 լիտր	6,000	6,000	6,000	6,000	
51	Յուղի հավելում, 1 լիտր	4,000	4,000	4,000	4,000	
52	Յուղի զտիչի փոխարինում	4,000	4,000	4,000	4,000	
53	Յուղի պոմպի փոխարինում	15,000	15,000	10,000	15,000	
54	Յուղի ռադիատորի փոխարինում	3,000	3,000	3,000	3,000	
55	Յուղի ռադիատորի նորոգում	3,000	3,000	3,000	3,000	
56	Բռնկման կարգավորում	3,000	3,000	3,000	3,000	
57	CO կարգավորում	3,000	3,000	3,000	3,000	
58	Խարնարակի վերանորոգում	0	0	0	0	
59	Օդի զտիչի փոխարինում	6,000	6,000	6,000	6,000	
60	Օդի ծախսի տվիչի փոխարինում (Դեմեռվե)	40,000	40,000	30,000	40,000	Պայանագրի կնքման պահից_մինչև 30 դեկտեմբերի 2019թ.
61	Օդի ծախսի տվիչի ռետինե խողովակի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	
62	Օդի զտիչի փողրակի փոխարինում	1,000	1,000	1,000	1,000	
63	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	25,000	25,000	25,000	25,000	
64	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	6,000	6,000	6,000	6,000	
65	Բոցամուղի կարգավորում				0	
66	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	
67	Բենզամղիչի փոխարինում	30,000	30,000	15,000	40,000	
68	Վառելիքի զտիչի փոխարինում	20,000	20,000	8,000	30,000	
69	Վառելիքի բաքի վերանորոգում	1,000	1,000	1,000	1,000	
70	Վառելիքի բաքի փոխարինում	1,000	1,000	1,000	1,000	
71	Վառելիքի բաքի մաքրում	1,000	1,000	1,000	1,000	
72	Համակարգչային ախտորոշում	5,000	5,000	5,000	5,000	
73	Հանակագչի վերանորոգում	5,000	5,000	5,000	5,000	
74	Ղեկավարման բլոկի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	
75	Ղեկավարման բլոկի վերանորոգում	0	0	0	0	
76	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	10,000	10,000	5,000	10,000	
77	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	
78	Ապակու մաքրման ջրի բաքի փախարինում	5,000	5,000	5,000	5,000	
79	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում	1,000	1,000	1,000	1,000	
80	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	15,000	15,000	10,000	17,000	
	3. Սառեցման և արտածման համակարգ***					
81	Հովհարի փոկի փոխարինում	15,000	15,000	15,000	15,000	
82	Հովհարի փոխարինում	30,000	30,000	30,000	30,000	
83	Հովհարի շարժիչի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	
84	Ռադիատորի փոխարինում	60,000	60,000	45,000	65,000	
85	Նույնը կոնդիցիոների դեպքում				0	
86	Նույնը ԱՓՏ-ի դեպքում				0	
87	Ռադիատորի վերանորոգում	35,000	35,000	35,000	40,000	
88	Թերմոստատի փոխարինում	17,000	17,000	14,000	17,000	
89	Ջրի պոմպի փոխարինում	28,000	28,000	20,000	55,000	
90	Ջրի եռաբաշխիչի փոխարինում (տրայնիկ)	5,000	5,000	5,000	5,000	
91	Նույնը կոնդիցիոների դեպքում				0	

1	2	4	5	6	7	8
92	Ընդարձակող բաքի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	
93	Նույնը կոնդիցիոների դեպքում				0	
94	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	3,000	3,000	2,000	3,000	
95	Ընդարձակող բաքի փականի (крышка) փոխարինում	4,000	4,000	2,000	5,000	
96	Խլարարի վերանորոգում	3,000	3,000	3,000	3,000	
97	Խլարարի անուրի (хамут) փոխարինում	500	500	500	500	
98	Խլարարի ներդիրի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	
99	Խլարարի կախոցի փոխարինում	2,000	2,000	2,000	2,000	
100	Ռադիատորի փողրակի փոխարինում	2,000	2,000	2,000	2,000	
101	Սառեցման հեղուկ փոխարինում	12,000	12,000	12,000	12,000	
102	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	45,000	45,000	30,000	45,000	
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ***					
103	Բանվ. կամ գլխ. գլանի փոխարինում	40,000	40,000	25,000	4,000	
104	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	75,000	75,000	40,000	0	
105	Կցորդման ոտնակի փոխարինում	5,000	5,000	5,000	0	
106	Կցորդման ճոպանի փոխարինում	5,000	5,000	5,000	0	
107	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր	250,000	250,000	100,000	0	
108	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	15,000	15,000	10,000	0	Պայանագրի կնքման պահից_մինչև 30 դեկտեմբերի 2019թ.
109	ՓՏ ի պատյանի վերանորոգում	5,000	5,000	5,000	0	
110	ՓՏ-ի յուղի փոխարինում	10,000	10,000	10,000	0	
111	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	5,000	5,000	5,000	0	
112	ԱՓՏ-ի կոնվերտերի փոխարինում	0	0	0	10,000	
113	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	0	0	0	10,000	
114	ԱՓՏ-ի վերանորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	0	0	0	400,000	
115	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	0	0	0	15,000	
116	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	0	0	0	115,000	
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ***					
117	Բաշխիչ տուփի վերանորոգում	50,000	50,000	50,000	50,000	
118	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	20,000	20,000	20,000	20,000	
119	Կարդանային լիսեռի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	
120	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	20,000	20,000	20,000	20,000	
121	Կարդանային լիսեռի միջ. կախոցի փոխարինում	20,000	20,000	20,000	20,000	
	6. Առջևի և հետևի կամրջակներ***					
122	Առջևի կամ հետևի կամրջակի վերանորոգում	50,000	50,000	50,000	50,000	
123	Առջևի կամ հետևի կամրջակի փոխարինում	50,000	50,000	50,000	50,000	
124	Կիսասոնու առանցքակալի փոխարինում	20,000	20,000	20,000	20,000	
	7. Կախոց***					
125	Առջևի կախոցի վերանորոգում	10,000	10,000	10,000	10,000	
126	Տրավերսի փոխարինում	30,000	30,000	30,000	30,000	
127	Ձախ կամ աջ հոդակապի փոխարինում	50,000	50,000	25,000	50,000	
128	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	30,000	30,000	20,000	45,000	
129	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	30,000	30,000	20,000	45,000	
130	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	
131	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	25,000	25,000	15,000	25,000	
132	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	20,000	20,000	10,000	20,000	
133	Զսպակի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	
134	Զսպակի վոռանների փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	
135	Առջևի ցնցամեղմիչի վերանորոգում	25,000	25,000	10,000	30,000	
136	Առջևի ցնցամեղմիչի փոխարինում	45,000	45,000	25,000	80,000	
137	Ներքևի լծակի փոխարինում	50,000	50,000	25,000	60,000	
138	Ներքևի լծակի վոռանների փոխարինում	35,000	35,000	15,000	40,000	
139	Առջևի աջ կամ ձախ ձգանների փոխարինում	20,000	20,000	15,000	20,000	

1	2	4	5	6	7	8
140	Միջին ձգանի փոխարինում	13,000	13,000	8,000	13,000	
141	Ճոճանակային լծակի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	
142	Վերևի լծակի փոխարինում	45,000	45,000	25,000	50,000	
143	Վերևի լծակի վոռանների փոխարինում	30,000	30,000	12,000	30,000	
144	Գնդե հողակապերի փոխարինում	12,000	12,000	6,000	15,000	
145	Ծայրակաների փոխարինում	12,000	12,000	6,000	14,000	
146	Առջևի կայունարարի փոխարինում	0	0	0	0	
147	Առջևի կայունարարի վոռանների փոխարինում	10,000	10,000	6,000	10,000	
148	Հետևի զսպանակի փոխարինում	0	0	0	0	
149	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	40,000	40,000	25,000	60,000	
150	Հետևի ձգաձողի փոխարինում	20,000	20,000	10,000	20,000	
151	Հետևի երկաթաձողի փոխարինում	17,000	17,000	10,000	17,000	
152	Կայունարարի կանգնակների փոխարինում	15,000	15,000	10,000	15,000	
153	Հետևի ձգաձողի վերանորոգում	10,000	10,000	5,000	10,000	
154	Հետևի երկաթաձողի վերանորոգում	10,000	10,000	5,000	10,000	
155	Հետևի անկյունագծային լծակի վերանորոգում	10,000	10,000	5,000	10,000	Պայանագրի կնքման պահից_մինչև 30 դեկտեմբերի 2019թ.
156	Անկյունագծային լծակի վոռանների փոխարինում	15,000	15,000	15,000	15,000	
157	Անվաբացքի կարազավորում	8,000	8,000	6,000	12,000	
158	Զողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	5,000	5,000	5,000	5,000	
	8. Ղեկային մեխանիզմ***					
159	Ղեկային կալունի վերանորոգում	60,000	60,000	30,000	60,000	
160	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վոռանների փոխարինում	12,000	12,000	5,000	12,000	
161	Հիդրոուժեղարարի պոմպի փոխարինում	15,000	15,000	5,000	15,000	
162	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգում	20,000	20,000	5,000	20,000	
163	Հիդրոուժեղարարի փոկի փոխարինել	15,000	15,000	5,000	15,000	
164	Հիդրոուժեղարարի փողրակի վերանորոգում	5,000	5,000	5,000	5,000	
165	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0	
166	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	30,000	30,000	20,000	30,000	
167	ՀՈՒՂԿ-ի յուղի փոխարինում	12,000	12,000	5,000	12,000	
	9. Արգելակային համակարգ***					
168	Գլխ. գլանի փոխարինում	15,000	15,000	10,000	15,000	
169	Վակուումային ուժեղարարի փոխարինում	20,000	20,000	15,000	20,000	
170	Բանվ. գլանի փոխարինում	20,000	20,000	15,000	20,000	
171	Արգելակային համակարգի օդահանում	4,000	4,000	4,000	4,000	
172	Առջևի սուպպորտի վերանորոգում	30,000	30,000	15,000	30,000	
173	Հետևի սուպպորտի վերանորոգում	30,000	30,000	15,000	30,000	
174	Արգելակային փողրակի փոխարինում	8,000	8,000	8,000	8,000	
175	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	35,000	35,000	20,000	35,000	
176	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	25,000	25,000	20,000	25,000	
177	Հետևի կոճղակների փոխարինում	20,000	20,000	15,000	20,000	
178	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	35,000	35,000	25,000	40,000	
179	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	35,000	35,000	25,000	40,000	
180	ABS-ի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	
181	Ձեռքի արգելակի ճոպանի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	
182	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	5,000	5,000	5,000	5,000	
183	Արգելակային հեղուկի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	
	10. Էլեկտրասարքավորում***					
184	Էլեկտրասարքավորման վերանորոգում	10,000	10,000	10,000	10,000	
185	Չափիչ սարքերի փոխարինում	8,000	8,000	8,000	8,000	
186	Գեներատորի փոխարինում	80,000	80,000	50,000	80,000	
187	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	0	0	0	0	
188	Գեներատորի վերանորոգում	45,000	45,000	30,000	45,000	
189	Գեներատորի ստատորի փոխարինում	25,000	25,000	15,000	25,000	
190	Գեներատորի ռոտորի փոխարինում	20,000	15,000	15,000	20,000	
191	Գեներատորի լիցքավորման ռելեի փոխարինում	15,000	15,000	10,000	15,000	

1	2	4	5	6	7	8
192	Գեներատորի դիոդային կամրջակի փոխարինում	20,000	20,000	100,000	20,000	Պայանագրի կնքման պահից_մինչև 30 դեկտեմբերի 2019թ.
193	Գեներատորի առանցքակալի փոխարինում	10,000	10,000	5,000	10,000	
194	Գեներատորի փոկանիվի փոխարինում	8,000	8,000	5,000	8,000	
195	Գեներատորի փաթույթի փոխարինում	9,000	9,000	5,000	9,000	
196	Գեներատորի շկիֆի փոխարինում	15,000	15,000	5,000	15,000	
197	Մեկնարկիչի վերանորոգում	20,000	20,000	20,000	20,000	
198	Մեկնարկիչի փոխարինում	70,000	70,000	50,000	70,000	
199	Մեկնարկիչի խարիսխի փոխարինում	15,000	15,000	10,000	15,000	
200	Մեկնարկիչի իրանի փոխարինում	15,000	15,000	10,000	15,000	
201	Մեկնարկիչի բռնիչի փոխարինում	15,000	15,000	10,000	15,000	
202	Մեկնարկիչի բենդեքսի փոխարինում	15,000	15,000	10,000	15,000	
203	Մեկնարկիչի ավտոմատի փոխարինում	15,000	15,000	10,000	15,000	
204	Մեկնարկիչի ռելեի փոխարինում	15,000	15,000	10,000	15,000	
205	Մեկնարկիչի ածուխների փոխարինում	15,000	15,000	10,000	15,000	
206	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	5,000	5,000	5,000	10,000	
207	Էլեկտրական տվիչների փոխարինում	3,000	5,000	5,000	5,000	
208	Էլեկտրական անջատիչների փոխարինում	3,000	5,000	5,000	5,000	
209	Կոնդիցիոների լիցքավորում	15,000	15,000	12,000	15,000	
210	Կոնդիցիոների վերանորոգում	1,000	1,000	1,000	1,000	
211	Ազդանշանի կարգավորում	1,000	1,000	1,000	1,000	
212	Ազդանշանի փոխարինում	1,000	1,000	1,000	1,000	
213	Առջևի լապտերի փոխարինում	20,000	20,000	20,000	20,000	
214	Հետևի լապտերի փոխարինում	20,000	20,000	20,000	20,000	
215	Վառոցքի կոճի փոխարինում	30,000	30,000	30,000	30,000	
216	Չափիչ սարքերի փոխարինում	8,000	8,000	8,000	8,000	
217	Չափիչ սարքերի նորոգում	4,000	4,000	4,000	4,000	
218	Ապակելվացիչի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	
219	Ապակելվացիչի շարժիչի փոխարինում	5,000	5,000	5,000	15,000	
220	Ապահովիչների փոխարինում	2,500	2,500	2,500	2,500	
221	Ապակեամբարձիչների փոխարինում	5,000	5,000	5,000	15,000	
222	Պարապ ընթացքի տվիչի փոխարինում (մալնու դաչիկ)	5,000	5,000	5,000	5,000	
223	Մարտկոցի կլեյմաների փոխարինում	500	500	500	500	
	11. Այլ ծառայություններ***					
224	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում զին 1 քառ.դմ - ի համար	5,000	5,000	5,000	5,000	
225	Ավտոմեքենայի թափքի հղկափայլեցում զին 1 կտորի համար	15,000	15,000	15,000	15,000	
226	Եռակցման աշխատանքներ զին 1սմ (զծ.մ) համար	5,000	5,000	5,000	5,000	
227	Ավտոմեքենայի շարժիչի լվացում	3,000	3,000	3,000	3,000	
228	Անվադողի փոխարինում	1,000	1,000	1,000	1,000	
229	Անիվի բայանսավորում	1,500	1,500	1,500	1,500	
230	Անվադողի վերանորոգում	1,000	1,000	1,000	1,000	
231	Անիվի վալց	2,000	2,000	2,000	2,000	
232	Առջևի կամ հետևի անվաթացքի կարգավորում	0	0	0	0	
233	Ավտոմեքենայի առջևի կողային ապակու փոխարինում	20,000	20,000	10,000	20,000	
234	Ավտոմեքենայի հետևի ապակու փոխարինում	20,000	20,000	10,000	20,000	Պայանագրի կնքման պահից_մինչև 30 դեկտեմբերի 2019թ.
235	Ավտոմեքենայի հետևի կողային ապակու փոխարինում	20,000	20,000	10,000	20,000	
236	Գորգիկի փոխարինում 4 հատը	20,000	20,000	15,000	25,000	

1	2	4	5	6	7	8
237	CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար	5,000	5,000	5,000	5,000	
238	Խառատային աշխատանքներ	5,000	5,000	5,000	5,000	
239	Փականագործի աշխատանքներ	5,000	5,000	5,000	5,000	
240	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	1,500	1,500	1,500	1,500	
	Ընդամենը	***3,912,000***	***3,911,000***	***2,776,000***	***4,526,000***	
	Ընդամենը	Առավելագույն գինը 600000 դրամ է	Առավելագույն գինը 600000 դրամ է	Առավելագույն գինը400000 դրամ է	Առավելագույն գինը 400000 դրամ է	

****Ցանկացած մասի կամ հանգույցի համար կատարողը պատվիրատուին երաշխավորում է վերանորոգման դեպքում առնվազն 3 ամիս,իսկ փոխարինման դեպքում առնվազն 6 ամիս: Ծառայության արժեքի մեջ պետք է ներառված լինեն փոխարինվող պահեստամասերի, նյութերի գները: Փոխարինվող պահեստամասերը և օգտագործվող նյութերը լինեն չօգտագործված և տրանսպորտային միջոցի արտադրողի կողմից արտոնագրված: Պատվիրատուն ցանկացած պահի իրավունք ունի կատարողից պահանջել տեխնիկական սպասարկման ընթացքում օգտագործված նյութերի և պահեստամասերի որակի փաստաթղթերը:*

*****Տեխնիկական սպասարկման ծառայության մատակարարը պետք է ունենա տեսանկարահանման հնարավորություն անհրաժեշտության դեպքում մեքենայի վերանորոգման ընթացքի տեսաձայնագրությունը պատվիրատուին ներկայացնելու համար:*

******Մեքենայի շարժիչի վերանորոգման աշխատանքները պետք է իրականացվեն առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ մնացած աշխատանքները առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում:*

Պատվիրատու
ՀՀ ԱՆ Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան
առողջապահության ազգային ինստիտուտ ՓԲԸ
Հասցե՝ք. Երևան, Կոմիտաս 49/4
ՀՎՀՀ՝
00011624Բանկ՝<<Հայէկոնոմբանկ>>Արաբկիր
մ/ճ
հ/հ՝ 1630581014 41
Տնօրեն Ա.Բազարչյան

ստորագրություն

Մատակարար
Ֆլեշ Մոտորս ՍՊԸ
ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
Հասցե՝ք. Երևան, Ռուբինյանց փ 31
«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 00873228
Բանկ՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1510012745550100
Տնօրեն Ա.Լալայան

ստորագրություն

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

«ՀՀ ԱՆ ԱԱԻ-ԳՀԾՁԲ-19/7»

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1-4	5011113	Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն													2000000

Վճարումը կկատարվի ծառայության հանձնման- ընդունման արձանագրության ստորագրումից հետո 20բանկային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ <<Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ>>ՓԲԸ
Հասցե՝ք. Երևան, Կոմիտաս 49/4
ՀՎՀՀ՝ 00011624
Բանկ՝<<Հայէկոնոմբանկ>>Արաբկիր մ/ճ
հ/հ՝ 163058101441

Տնօրեն Ա.Բազարչյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Ֆլեշ Մոտորս ՍՊԸ
Հասցե՝ք. Երևան, Ռուբինյանց փ 31
«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 00873228
Բանկ՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1510012745550100

Տնօրեն Ա.Լալայան

(ստորագրություն)
Կ.Տ.